ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
«09» դեկտեմբերի 2020թ.-ին կնքված «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով՝
Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման
պետական գնման պայմանագրի

ք.Երևան «26» հունվարի 2021թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Արփինետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Գ. Շախբազյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), երեքը միասին՝ կողմեր, հիմք ընդունելով «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.17թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը՝ համաձայն N1-ի և Վճարման ժամանակացույցը՝ հավելված N 2-ի ։

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021թ-ի հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

## *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև այն ուժի մեջ մտնելը Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ, ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցած ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում։

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը։

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ։

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ։ Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ։

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՀ 900011023984<br>ՀՎՀՀ 02505554 | «Արփինետ» ՍՊԸ<br>ՀՀ, Արմավիրի մարզ,<br>ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ<br>ՀՀ 2050622092881001<br>ՀՎՀՀ 04719683 | Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին<br>ք. Երևան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8<br>ՀՎՀՀ 00189782 |
| ------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*«09 » դեկտեմբերի 2020թ. կնքված*
*«ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով պայմանագրի*
*« 26 » հունվարի 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Առավելագույն գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 64211100/514 | Հանրային հեռախոսային ծառայություններ համաձայն կից տեխնիկական բնութագրի* * | դրամ | 3 000 000 | 1 | ք.Երևան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 | 01.01.2021թ-30.12.2021թ. |

տեխնիկական բնութագիր*
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 1

| նկարագրությունը |
|---|
| 1. Օպերատորը պետք է ապահովի բաժանորդի տարածքում գտնվող թվով 1 հատը քառանիշ տիրույթից թեժ գիծ ապահովելու նպատակով և 21 հատ (պատվիրատուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում փոփոխման հնարավորությամբ) ներքին հեռախոսների համար ֆիքսված հեռախոսակապի ծառայություն, որը պետք է համատեղելի լինի այլ վարչական շրջանների ներքին հեռախոսահամարների հետ և գործի անվճար: |
| 2. Բաժանորդի 21 արտաքին համարները պետք լինեն 9-նիշ տիրույթից: |
| 3. Բաժանորդի արտաքին համարները պետք է լինեն 21 հատ, միաժամանակ առնվազն 2 զանգ կատարելու հնարավորությամբ, որոնք բաժանորդը կարող է ընտրել տրամադրված համարների տիրույթից և անհրաժեշտության դեպքում ավելացնել: |
| 4. Հեռախոսահամարներից 5-ը պետք է ունենա միաժամանակ առնվազն 5 զանգ կատարելու հնարավորություն: |
| 5. Բաժանորդի կողմից սպասարկող օպերատորի ցանցում ելքային զանգերը պետք է լինեն անվճար, յուրաքանչյուր հեռախոսահամար պետք է ունենա ամսեկան առնվազն 300 րոպե դեպի ՀՀ ֆիքսված ցանցեր անվճար րոպեներ: |
| 6. Ելքային զանգերը՝ |

| № | մատուցվող ծառայությունը | չափման միավորը | միավորի առավելագույն գինը (ՀՀ դրամ/րոպե) |
|---|---|---|---|
| 1 | Ծառայության մեկ հեռախոսահամարի համար ներդրման միանվագ վճարը | - | Անվճար |
| 2 | Տեղական և միջքաղաքային զանգեր Հայաստանի ֆիքսված այլ ցանցեր ամսական 300 րոպե անճար զանգերից հետ | (ՀՀ դրամ/րոպե) | 4 |
| 3 | ՀՀ բջջային բոլոր օպերատորների համար | (ՀՀ դրամ/րոպե) | 16 |
| 4 | Արցախի Հանրապետություն ֆիքսված ցանցեր (հաշվարկը | (ՀՀ | 15 |

| | | | |
|---|---|---|---|
| | պետք է կատարվի վայրկյաններով) | դրամ/րոպե) | |
| 5 | Արցախի Հանրապետություն շարժական բջջային կապի ցանց | (ՀՀ դրամ/րոպե) | 25 |
| 6 | Ամսական սպասարկման վճարը /յուրաքանչյուր գծի համար/ | (ՀՀ դրամ/ամիս) | 1140 |
| 7 | Քառանիշ թեժ գծի ներդրման միանվագ վճար | - | անճար |
| 8 | Քառանիշ թեժ գծի Ամսական սպասարկման վճարը | (ՀՀ դրամ/ամիս) | 1140 |
| | | | |

7. Օպերատորի կողմից Պատվիրատուի տարածքում՝ բացառությամբ հեռախոսային սարքավորումների, պետք է անվճար տեղադրվեն, կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ սարք-սարքավորումները, որոնք պայմանագրի ժամկետի ավարտից հետո կդառնան Պատվիրատուի սեփականությունը, տրամադրվեն և անցկացվեն անհրաժեշտ կապուղիները: Բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փործարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը պետք է լինի ոչ ուշ, քան ծառայության մատուցումից 20 օրացույցային օր առաջ:

8. Օպերատորը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը (Dual path redundant Service, UPS):

9. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4 (չորս) ժամը:

10. Օպերատորի կողմից տրամադրվող ներքին հեռախոսակայանը պետք է օժտված լինի VOIP տեխնոլոգիայի բոլոր հիմնական հատկություններով (Call Transfer, Call Parking, Caller ID, Conference Call, Video call, etc.)

11. Օպերատորը ԱՀԿ-ի միջոցով պետք է միացնի առանձնացված ստորաբաժանումները, և ապահովի նրանց հասանելիությունը միմյանց հետ՝ անկախ գտնվելու վայրից:

12. Օպերատորը պետք է տրամադրի անսահմանափակ SIP trunk-երի հնարավորություն, 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում, յուրաքանչյուր գիշեր ավտոմատ կերպով ԱՀԿ-ի Backup կատարելու հնարավորություն:

13. Սպասարկվող հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ ծառայության ստացողի գրավոր պահանջի հիման վրա:

14. Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:

15. Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011023984
ՀՎՀՀ 02505554

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Արփինետ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050622092881001
ՀՎՀՀ 04719683

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**

Քաղաքաշինության, տեխնիկական
և հրդեհային անվտանգության
տեսչական մարմին
ք. Երևան, Դավթաշեն 4 Թ.
Միկոյան փող. 109/8
ՀՎՀՀ 00189782

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«09 » դեկտեմբերի 2020թ. կնքված*
*«ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով պայմանագրի*
*«26» հունվարի 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211100/514 | Հանրային հեռախոսային ծառայություններ | 0 | 600 000 | 600 000 | 1 350 000 | 1 350 000 | 1 350 000 | 2 100 000 | 2 100 000 | 2 100 000 | 3 000 000 | 3 000 000 | 3 000 000 | **3 000 000** |

* *վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011023984
ՀՎՀՀ 02505554
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Արփինետ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին,
Բաղրամյան 22/2
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050622092881001
ՀՎՀՀ 04719683
/ստորագրություն/
Կ.Տ

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**
Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին
ք. Երևան, Դավթաշեն 4,
Ա. Միկոյան փող. 109/8
ՀՎՀՀ 00189782
/ստորագրություն/
Կ.Տ